ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱԽԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՆՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ամենայն գիրք աստուածաշունչ եւ օգտակարք, ի վարդապետութիւն են եւ ի յանդիմանութիւն եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան»:

(Բ Տիմ. Գ 16)

Այն երանելի օրից երբ սուրբ Լուսաւորչի տեսիլքով, Իմանալի լոյսը իջաւ հայոց աշխարհ, մեր ժողովուրդը իր միտքն ու հոգին բեղմնաւորեց այդ լոյսով և այլևս երբեք չբաժանուեց նրանից:

Նոյնիսկ պատմութեան յաճախ դաժան պահերին, նա նախընտրեց իր կեանքը զոհել, բայց միշտ վառ պահել իր հոգու ճրագը եւ այն փոխանցել գալիք սերունդներին: Կարծէք Յիսուս յատկապէս հայ ժողովրդի համար ասած լինէր «զհոգին մի՛ շիջուցանէք»:

Մեր ազգային ողջ պատմութեան ընթացքում, մինչեւ մեր օրերը, ա՛յդ կենարար ու ստեղծարար լոյսի մշտահոս աղբիւրը հանդիսացաւ՝ ամենայն հայոց սրբազնաւսուրբ Էջմիածինը:

Այստեղ, սուրբ Էջմիածնում, այդ լոյսի շաղախով սկիզբ առաւ հայ հարտարապետութեան ազգային ոճը:

Սուրբ Մեսրոպեան սերնդի օրերին, նոյն այդ լոյսը, այստեղից, սուրբ Էջմիածնից, նոր ճառագայթումով շողաց՝ հայ տառերի գիւտով, սուրբ Գրոց թարգմանութեամբ և հայ դպրութեան ու մատենագրութեան սկզբնաւորումով:

Այստեղից, սուրբ Էջմիածնից, միշտ նոյն այդ լոյսի զօրութեամբ հնչեցին Աւարայրի ազատութեան շեփորները և հազար հինգ հարիւր տարիներ յետոյ՝ մարտի հրաւէր զանգակները Սարդարապատի:

Այսպէս է որ բազում դարեր, ս. Էջմիածինը մնաց ներշնչարանը, առաջնորդող ոգին, կազմակերպիչ հոգեւոր ուժը Հայաստանեայց եկեղեցւոյ եւ հայ ժողովրդի, թէ՛ ի Հայաստան, թէ՛ ի սփիւռս աշխարհի:

Վերջին տասնեւվեց դարերի հայոց պատմութեան ընթացքում, չկայ եկեղեցական, ազգային, մշակութային մի նշանակալից իրագործում որ առնչուած չլինի սուրբ Էջմիածնից շողացող ոգեկան լոյսի հետ: Նոյնիսկ երբ Ամենայն Հայոց Հայրապետութեան Աթոռը, քաղաքական դժբախտ պայմանների բերումով, ստիպուած է եղել ժամանակաւորապէս փոխադրուել Հայաստանի այլ շրջանները, միշտ ս. Էջմիածինն է մնացել նրա մտապատկերը, նրա ներշնչարանը, նրա կենարար լոյսի աղբիւրը, որին վերադարձել է, երբ համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծուել Արարատեան աշխարհում:

Հայ ժողովրդի հոգեւոր լուսաւորութեան եւ ազգային-մշակութային զարթօնքի ճանապարհին, 1771 թուականը մի կարեւոր հանգրուան է հանդիսանում, երբ լուսաբնակ Սիմէոն կաթողիկոս Երեւանցու օրօք, ս. Էջմիածնում հիմնադրւում է հայատառ տպարան, առաջինը հայոց աշխարհի ամբողջ տարածքի վրայ: Տպարան որ սկսել է գործել 1772-ին, իր կողքին ունենալով նաեւ թղթի գործարան՝ 1776-ին:

Պատմութիւնը ոսկի տառերով է արձանագրել՝ «Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածնի, ամենայն պարագայիւքն, հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոնի սրբազան կաթողիկոսին Երեւանցւոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մականուամբ Ջաքիկենց, ի յիշատակ իւրեան և իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն»:

Սուրբ Էջմիածնի տպարանը տարիներ շարունակ առանց ընդհատումի գործել է մինչեւ 1919 թուականը, լոյս ընծայելով բազում օգտակար՝ կրօնական, եկեղեցական պատմութեան ու արուեստի, պատմա-բանասիրական, ազգային հայրենասիրական եւ գեղարուեստական գործեր, որոնց շարքում փառաւոր տեղ է գրաւում Մայր Աթոռի «Արարատ» պաշտօնաթերթը, որ լոյս է տեսել յիսուն տարի շարունակ՝ 1868-ից մինչեւ 1919:

Տիրոջ ողորմութեամբ, Մեր օրօք, յոյժ բարենպաստ պայմաններում, Մայր Աթոռի տպարանը վերաբացուեց 1961 թուականին, ամբողջապէս նոր մեքենաներով եւ սարքաւորումներով, առատատուր լումաներովը Միացեալ Նահանգաց մեր հաւատացեալ զաւակների, տպարան որ գործում է նոյն ոգով եւ նոյն արդիւնաւէտութեամբ, ինչպէս այն հիմնուել էր մեզանից երկու հարիւր տարիներ առաջ, տեսիլքովը եւ տքնութեամբը մի մեծ ու շինարար Հայրապետի:

Այսու Մեր կոնդակով, 1972 տարին յայտարարում ենք յոբելինական տարի եւ հրաւէր ենք կարդում որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում, հանդիսաւոր սրբազան արարողութիւններով ոգեկոչուի յիշատակը՝ ս. Էջմիածնում տպարանի հիմնադրութեան երկու հարիւր ամեակի, նրա երջանկայիշատակ

հիմնադիր Երեւանցի Սիմէոն կաթողիկոսի, բարեպաշտ բարերարների, և Մայր Աթոռի գործակից միաբանների։

Յարգա՜նք եւ օրհնութի՜ւն նրանց պայծառ յիշատակին։

Ամենայն հայոց Մայր տաճարի Իջման սուրբ սեղանից բաշխուող քրիստոսապարգև լոյսը թող միշտ վառ մնայ բոլոր հայ եկեղեցիներում եւ մեր հաւատաւոր զաւակների հոգիներում, որպէսզի նրանք շարունակեն իրենց նուիրական առաքելութիւնը նաեւ մեր օրերում. թէ՛ վերածնուած հայոց մայր երկրի երջանիկ պայմաններում եւ թէ՛ սփիւռքում. իմաստաւորելով իրենց կեանքն ու գործը՝ առաւել ու առաւել հարստացումովը հայկական ոգեկանութեան ազգային մեծ գանձարանի։

Օրհնութիւն եւ շնորհք Միածին Որդւոյն, Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանն, ամէն։

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 28-ն յունուարի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 729